# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի,Շահումյան,2, Հեռ. 0262-40005

N 1052
*13 սեպտեմբեր 2011թ.*

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Պողոսյան.*

Ուղարկվում է Մարտունի համայնքի ավագանու 06.09.2011թ. կայացած թիվ 8 նիստի հաստատված արձանագրությունը, 17 թերթի վրա:

ՔԱՂԱՔԱՊԵՏ` Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Խ. ԽԼՂԱԹՅԱՆ*
4-11-56

Գեղարքունիքի մարզպետարան
ՆԱՄԱԿՆԵՐԻ ԲԱԺԻՆ
Մուտք 5408
29 09 11

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ - 8*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-Ը ՄԵՂՏԵՄԲԵՐԻ 2011 Թ. ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ:*
*Նիստին մասնակցում էին համայնքի 11 ավագանիներից 8-ը՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ, Ռ. ԴԱՎԹՅԱՆ, Խ. ԴԱՎԹՅԱՆ, Ա. ՄԵԼԻՔՅԱՆ, Ա. ՄՈՍՈՅԱՆ, Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ս. ՍՈՂՈՅԱՆ Ա. ՋԻՐՈՅԱՆ:*
*Նիստը վարում էր քաղաքապետը՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ*

*Քարտուղարությամբ՝ Խ. ԽԼՂԱԹՅԱՆԻ*

*ՕՐԱԿԱՐԳՈՒՄ*

ՀԱՐՑ -86. «Մարտունի համայնքի վարչական տարածքում, գազաբաշխման կայան կառուցելու և գազատար անցկացնելու նպատակով տարածք տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -87. «Մարտունի համայնքի վարչական տարածքում սարքավորումներ տեղադրելու նպատակով «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ին տարածք տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-88. « Մարտունի համայնքի մի շարք բնակիչների կողմից իրենց սեփական հողամասերից հրաժարվելու և համայնքին հանձնելու կապակցությամբ, այդ հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -89. «Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -90. «Մարտունի քաղաքի Զ. Անդրանիկ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ենթակայանի քանդված շինությունը աճուրդ - վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -91. « ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և Ռումինիայի հանրապետության Բակեու քաղաքների միջև քույր քաղաքների պայմանագիր կնքելու նպատակով Բակեուի քաղաքապետին և նրա տիկնոջը Մարտունի քաղաք հրավիրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -92. «Մարտունի քաղաքի Մ. Հերացի փողոցի թիվ 9 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող կաթսայատան քանդված շինությունը աճուրդ - վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -93. «Մարտունի համայնքի վարչական տարածքում գտնվող <<Օղանավակայան>> կոչվող դաշտի վարելահողերը ջրովի դարձնելու նպատակով, արտեզյան աղբյուր հորատելու և ջրօգտագործման

թույլտվություն ստանալու համար ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -94. «Մարտունի համայնքի սոցիալապես վատ պայմաններում գտնվող որոշ ընտանիքների դպրոց հաճախող երեխաներին գրքերի, գրենական պիտույքների ձեռք բերման գումար տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -95. «Մարտունի քաղաքի տարածքում աղբահանության պրոցեսը բարելավելու նպատակով, հատուկ մասնագիտացված աղբատար ավտոմեքենա ձեռք բերելու համար ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -96. « Մարտունի քաղաքի Մամիկոնյան, Թումանյան և Գետափնյա 2 փողոցներից ապամոնտաժված ջերմցանցի խողովակները աճուրդ-վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -97. « Մարտունի քաղաքի բնակիչ Արթուր Վոլոդյայի Միերյանի հետ «Կալեր» կոչվող տարածքի 2,15 հա հողամասի վերաբերյալ կնքված վարձակալության պայմանագիրը լուծելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -98. «Մարտունի համայնքի 2011թ. բյուջեում փոփոխություն կատարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -99. «Դիմումների քննարկում»:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ
Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 86*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի վարչական տարածքում, գազաբաշխման կայան կառուցելու և գազատար անցկացնելու նպատակով տարածք տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 24.06.2010թ. N 876-Ն որոշումը , «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի 07.07.2011թ. N ARO-05-31/2097 գրությունը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 27.04.2006թ. N844-Ն որոշման 46.2 կետի «դ» ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի վարչական տարածքից 3,8 հա մակերեսով հողատարածք, ըստ կից ներկայացվող հատակագծի, առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրել «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին, գազաբաշխման կայանի կառուցման և գազատարի անցկացման համար:

2. Հողատարածքը տրամադրել 50 տարի ժամկետով, տարեկան 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ վարձավճարով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 87*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի վարչական տարածքում սարքավորումներ տեղադրելու նպատակով «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ին տարածք տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ի 03.06.2011թ. գրությունը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 27.04.2006թ. N844-Ն որոշման 46.2 կետի «դ» ենթակետի, «ՀՀ Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի վարչական տարածքից 200 քմ մակերեսով հողատարածք, ըստ կից ներկայացվող հատակագծի, ուղղակի վաճառքի կարգով օտարել «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ին, բջջային հեռախոսային ցանցի սարքավորումներ տեղադրելու համար:

2. Հողատարածքը օտարել 68400 (վաթսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարով:

3. Պահանջել «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ից հողատարածքի ուղղակի վաճառքի վերաբերյալ կազմված պայմանագիրը ներկայացնել նոտարական վավերացման և պետական գրանցման:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԳԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 88*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

« Մարտունի համայնքի մի շարք բնակիչների կողմից իրենց սեփական հողամասերից հրաժարվելու և համայնքին հանձնելու կապակցությամբ, այդ հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով Մարտունի համայնքի մի շարք բնակիչների կողմից իրենց սեփական հողամասերից հրաժարվելու և համայնքին հանձնելու մասին դիմումները և ղեկավարվելով «ՀՀ Հողային օրենսգրքի» 100-րդ, 101-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46- րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի մի շարք բնակիչների կողմից հրաժարված և համայնքին հանձնված հողամասերը ճանաչել համայնքային սեփականություն և մուտքագրել համայնքի հողային հաշվեկշիռ:

2. Համայնքի հողային հաշվեկշիռ մուտքագրված հողամասերի համար, դիմել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարտունու ստորաբաժանում, համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԳԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 89*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի 2011թ. երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

Հաստատել Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի ներկայացրած հաշվետվությունը (Կից ներկայացվում է):

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Մ. ՍՈՂՈՅԱՆ

## *ՈՐՈՇՈՒՄ N 90*
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի Զ. Անդրանիկ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ենթակայանի քանդված շինությունը աճուրդ - վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

### *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
### *ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ, Մարտունի քաղաքի Զ. Անդրանիկ թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ենթակայանի քանդված շինությունը օտարել աճուրդ - վաճառքի կարգով:

2. Ենթակայանի քանդված շինության շուկայական արժեքը որոշելու նպատակով, կատարել գնում լիցենզավորված մասնագիտական կազմակերպություն <<Կռունկ>> ՍՊԸ-ից:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ  N 91*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

« ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և Ռումինիայի հանրապետության Բակեու քաղաքների միջև քույր քաղաքների պայմանագիր կնքելու նախապատրաստական աշխատանքներ կատարելու նպատակով Բակեուի քաղաքապետին և նրա տիկնոջը Մարտունի քաղաք հրավիրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով Բակեուի և Մարտունու քաղաքապետերի միջև ձեռք բերված նախնական համաձայնությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

1. Համաձայնություն տալ, Ռումինիայի հանրապետության Բակեուի քաղաքապետին և նրա տիկնոջը սույն թվականի սեպտեմբերի 26-ից 30-ը հրավիրել քաղաք Մարտունի, քույր քաղաքների պայմանագիր կնքելու նախապատրաստական աշխատանքներ կատարելու նպատակով:

2. Հանդիպման ընթացքում կատարվող անհրաժեշտ ծախսերը ֆինանսավորել, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածի ֆինանսական միջոցների հաշվին:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԳԱՐԲԻՆՅԱՆ
Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 92*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի Մ. Հերացի փողոցի թիվ 9 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող կաթսայատան քանդված շինությունը աճուրդ - վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է.</u>*

1. Համաձայնություն տալ, Մարտունի քաղաքի Մ. Հերացի փողոցի թիվ 9 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող կաթսայատան քանդված շինությունը օտարել աճուրդ - վաճառքի կարգով:

2. Կաթսայատան քանդված շինության շուկայական արժեքը որոշելու նպատակով, կատարել գնում լիցենզավորված մասնագիտական կազմակերպություն <<Կոունկ>> ՍՊԸ-ից:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԳԱՐԲԻՆՅԱՆ
Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 93*
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի վարչական տարածքում գտնվող <<Օղանավակայան>> կոչվող դաշտի վարելահողերը ջրովի դարձնելու նպատակով, արտեզյան աղբյուր հորատելու և ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4267 հոդվածից, 120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ տեղափոխել «Ոռոգում» նախահաշվի (բաժին 04, խումբ 2, դաս 4) 4823 հոդված՝ արտեզյան աղբյուր հորատելու և ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ
Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 94
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի սոցիալապես վատ պայմաններում գտնվող որոշ ընտանիքների դպրոց հաճախող երեխաներին գրքերի, գրենական պիտույքների ձեռք բերման գումար տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի «Այլ մշակութային ծառայություններ» նախահաշվի 4239 հոդվածից 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Հիմնական ընդհանուր կրթություն>> (բաժին 09, խումբ 2, դաս 1) նախահաշվի 4819 հոդված, քաղաքի երեք դպրոցների երկկողմանի, միակողմանի ծնողազուրկ, սոցիալապես վատ պայմաններում գտնվող ընտանիքների երեխաներին գրքեր, գրենական պիտույքներ նվիրելու համար:

ա/ Թիվ 1 միջնակարգ դպրոց- 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ըստ կից ներկայացվող ցուցակի
բ/ Թիվ 2 միջնակարգ դպրոց- 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ըստ կից ներկայացվող ցուցակի
գ/ Թիվ 3 միջնակարգ դպրոց -200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ըստ կից ներկայացվող ցուցակի

2. Տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության սահմանելու նպատակով, Մարտունու քաղաքապետարանում ստեղծել հետևյալ աշխատանքային խումբը.
1. Կարո Կարապետյան
2. Արամ Ավետիսյան
3. Ռուբեն Դավթյան

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ
Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ՁԻՐՈՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N 95
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի տարածքում աղբահանության պրոցեսը բարելավելու նպատակով, հատուկ մասնագիտացված աղբատար ավտոմեքենա ձեռք բերելու համար ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով <<Մարտունի քաղաքի կոմունալ ծառայություն>> հիմնարկի 12.08.2011թ. N66 գրությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

### ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
### ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ միջոցից 3,4 մլն. (երեք միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել «Մարտունի քաղաքի կոմունալ ծառայություն» հիմնարկի 2011թ. նախահաշվի 5121 հոդված՝ աղբահեռացման նպատակով հատուկ մասնագիտացված աղբատար ավտոմեքենայի գնում կատարելու համար:

2. Գնումը կատարել պարզեցված ընթացակարգով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԳԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N 96
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի Մամիկոնյան, Թումանյան և Գետափնյա 2 փողոցներից ապամոնտաժված ջերմոցանցի խողովակները աճուրդ-վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

### *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
### *ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ, Մարտունի քաղաքի Մամիկոնյան, Թումանյան և Գետափնյա 2 փողոցներից ապամոնտաժված ջերմոցանցի խողովակները օտարել աճուրդ – վաճառքի կարգով:

2. Խողովակների շուկայական արժեքը որոշելու նպատակով, կատարել գնում լիցենզավորված մասնագիտական կազմակերպությունից <<Կոունկ>> ՍՊԸ-ից:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N 97
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի բնակիչ Արթուր Վոլոդյայի Միերյանի հետ «Կալեր» կոչվող տարածքի 2,15 հա հողամասի վերաբերյալ կնքված վարձակալության պայմանագիրը լուծելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով Մարտունի քաղաքի բնակիչ Արթուր Միերյանի 18.07.2011թ. N1330 դիմումը և ղեկավարվելով Մարտունու քաղաքապետարանի և Ա. Միերյանի միջև կնքված և 29.04.2002թ. նոտարական վավերացում ստացած պայմանագրի 18.2 կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ լուծել Մարտունու քաղաքապետարանի և Ա. Միերյանի միջև կնքված «Կալեր» կոչվող տարածքի 2,15 հա մակերեսով հողի վարձակալության պայմանագիրը:

2. Դիմել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի Մարտունու ստորաբաժանմանը, Ա. Միերյանին տրամադրված հողի սեփականության իրավունքի վկայականը չեղյալ համարելու խնդրանքով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ
Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ №98*
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի 2011թ. բյուջեում փոփոխություն կատարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4235 հոդվածից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել նույն նախահաշվի 4252 հոդված՝ սարքերի նորոգման համար:

2. Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4235 հոդվածից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել Մարտունու մշակույթի տան նախահաշվի 4213 հոդված՝ ջրմուղ-կոյուղու ծախսերը ֆինանսավորելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ
Ռ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ս. ՍՈՂՈՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N99
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«06»-ը Սեպտեմբերի 2011թ. ք. Մարտունի

«Դիմումների քննարկում»:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

## *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
## *ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Մարտունի քաղաքի ներքոնշված քաղաքացիների համար սահմանել գույքահարկի գծով արտոնություն (զիջում).

| հ/հ | ազգանուն, անուն, հայրանուն | գումարը (դրամ) | Սոց. քարտի համարը |
|---|---|---|---|
| 1 | Դավթյան Ջանիկ | 44712 | 3203810557 |
| 2 | Ղազարյան Գրիշա Ղազարի | 50000 | 2511470357 |
| 3 | Զաքարյան Արթուր Ավետիքի | 18500 | 2110660185 |
| 4 | Մուրադյան Փառանձեմ Սարիբեկի | 50000 | |

2. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 65 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ տեղափոխել 4729 հոդված:

3. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4729 հոդվածից, Մարտունի քաղաքի սոցիալապես անապահով ներքոնշված ընտանիքներին տրամադրել օգնություն 65 000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ.

| հ/հ | ազգանուն, անուն, հայրանուն | գումարը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Էլոյան Կատյա Ժորայի | 7000 |
| 2. | Ավետիսյան Գևորգ Դավթի | 7000 |
| 3. | Բարսեղյան Կարինե Մայիսի | 7000 |
| 4. | Միլամյան Գագիկ Հակոբի | 30000 |

| | | |
|---|---|---|
| 5. | Մարգարյան Խաչիկ Գարուշի | 7000 |
| 6. | Բարսեղյան Արմեն Հակոբի | 7000 |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Համայնքի ղեկավար՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Է. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ս. ՍՈՂՈՅԱՆ